ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ

«ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 2022» ԶԵԿՈՒՅՑ

2022 թ.մարտի 30

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Այս տարվա զեկույցը նվիրված է աշխարհում չնախատեսված և անցանկալի հղիությունների խնդրին և վերնագրված է «Տեսնել անտեսանելին. հիմք՝ չնախատեսված հղիությունների անտեսված ճգնաժամի դեմ գործելու համար»: Այն ի մի է բերում հասարակությունների, երկրների և, ընդհանուր առմամբ, համաշխարհային զարգացման վրա չնախատեսված հղիությունների և դրանց ազդեցության վերաբերյալ ամենաարդի տվյալները:

ԱՇԽԱՐՀՈՒՄ

- Ամեն տարի բոլոր հղիությունների **գրեթե կեսը չնախատեսված են**:
- 2015-ից 2019 թվականներին տարեկան գրանցվել է մոտ **121 միլիոն չնախատեսված հղիություն:**
- Չնախատեսված հղիությունների **ավելի քան 60 տոկոսն ավարտվում է աբորտով**:
- Ամբողջ աշխարհում կատարվող աբորտների **45 տոկոսն անվտանգ չեն:**
- Աշխարհում մոտ **257 միլիոն կին**, որոնք ցանկանում են խուսափել հղիությունից, չեն օգտագործում հակաբեղմնավորման անվտանգ, ժամանակակից մեթոդներ: Նրանցից 172 միլիոնն ընդհանրապես ոչ մի մեթոդ չի օգտագործում:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Ըստ Գուտմախերի ինստիտուտի 2022 թ. փետրվարի 4-ին արված գնահատման.



ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում որևէ բեղմնականխման միջոցի գործածության ցուցանիշը 57.1 տոկոս է, իսկ ժամանակակից բեղմնականխման միջոցների գործածության ցուցանիշը՝ 28 տոկոս:

Աբորտների հարցում Հայաստանում առաջընթաց կա. եթե 2000 թ.-ի տվյալներով վերարտադրողական տարիքի մեկ կնոջ հաշվով աբորտների թիվը 2.6 էր, ապա 2015-16 թթ. տվյալներով այն կազմում է 0.6:

(Աղբյուր՝ Ժողովրդագրական և առողջապահության հետազոտություն, 2015-16 թթ.)

Ամբողջական զեկույցի համար այցելեք unfpa.org/swop: